Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի Գետափնյա
համայնքի

# Ավագանու որոշում թիվ 17-Ն
## 05-12-11 թ.

### 2012թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ:

*Ղեկավարվելով «տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով՝*

## Ավագանին որոշեց՝

Հաստատել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինության (տեղադրման) թույլատվության համար, տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

1.1 Մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական, բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ - 7500 դրամ,

1.2 Սույն կետի «ա» չնախատեսված օբյեկտների համար
բ.ա/ 201-ից մինչև 500 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝- 15000դրամ
բ.բ/ 501-ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝- 25000դրամ
բ.գ/ 1001 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝- 35000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

1.3 Մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝- 15000 դրամ
1.4 20և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝- 25000 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլատվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

2.1 Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխությունների համար՝ -1500 դրամ,

2.2 Բացի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների

(այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար, սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կամ շենքերի գործառական նշանակության փոփոխությունների մասով:

2.3 Նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվել է -2500դրամ,

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվել է՝

4.1 Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ -5000 դրամ,

4.2 Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ - 7000 դրամ,

5. Համայնքի տարածքում՝

5.1 Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվել է յուրաքանչյուր օրվա համար՝ - 350 դրամ

5.2 Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի, վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվել է՝ -150.000 դրամ,

6. Համայնքի տարածքում մարդատար տաքսի (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվել է՝ - 10.000 դրամ,

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար, տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվել է՝ -3000 դրամ,

8. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթների և աճուրդների կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար, մասնակիցների վճարը սահմանել՝ -3000 դրամ,

9. Սույն որոշման 1-2-3-րդ կետերի դրույքաչափերը կիրառվել են 0,5 գործակիցը:

Ավագանի՝
Ա. Դալլաքյան
Գ. Աղամյան
Ա. Վարդանյան
Ռ. Ղազամյան
Ս. Հարությունյան
Գ. Ջանազյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի
Գետափնյա համայնքի

Ավագանու որոշում թիվ՝ 18-Ն

8-12-2011թ.

## 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

**Ավագանին որոշեց՝**

1. Հաստատել համայնքի 2012թ-ի վարչական բյուջեն եկամուտների և ծախսերի գծով 19583,8 հազ. դրամ
2. Հաստատել համայնքի 2012թ-ի վարչական բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամուտների հետևյալ չափերով.
   1) Հողի հարկ ֆիզիկական անձանցից - 1590,0 հազ. դրամ
   2) Գույքահարկ շենքի և շինության ֆիզիկական անձանցից – 500,0 հազ. դրամ
   3) Գույքահարկ իրավաբանական անձանցից - 2,0 հազ. դրամ
   4) Գույքահարկ փոխադրամիջոցներից - 1700,0 հազ. դրամ
   5) Տեղական տուրքեր - 510,0 հազ. դրամ

ա) Հիմնական շինությունների կառուցապատման թույլատվության համար - 150,0 հազ. դրամ

բ) Շենքերի և շինությունների վերակառուցման թույլատվության համար - 3,0 հազ. դրամ

գ) Շինությունների քանդման թույլատվություն - 5,0 հազ. դրամ

դ) Խմիչքների իրացման համար - 80,0 հազ. դրամ

ե) Ծխախոտի վաճառքի թույլատվություն - 112,0 հազ. դրամ

զ) Վառելիքի վաճառքի թույլատվություն - 150,0 հազ. դրամ

է) Տաքսի ծառայության թույլատվություն - 10,0 հազ. դրամ

ը) Դոտացիա - 15281,8 հազ. դրամ

3. Հաստատել համայնքի 2012թ-ի վարչական բյուջեից հատկացումները, ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման հետևյալ չափերով.

ա) 01.1.1 պետական մարմինների կառավարում - 9865,0 հազ. դրամ

բ) 01.6.1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություն - 700,0 հազ. դրամ

գ) 05.1.1 աղբահանում - 880,0 հազ. դրամ

դ) 10.7.1 սոց արտոնություններ - 2000,0 հազ. դրամ

ե) 08.1.1 հանգստի և սպորտի ծառայություն - 500,0 հազ. դրամ

զ) 01.3.3 ընդհանուր բնույթի այլ ծառայություն - 600,0 հազ. դրամ

է) 11.1.2 համայնքի պահուստային ֆոնդ - 3890,0 հազ. դրամ

ը) 06.4.1 փողոցների լուսավորություն - 300,0 հազ. դրամ

թ) 09.4.1 բարձրագույն մասնագիտական կրթություն - 848,8 հազ. դրամ

4. Հաստատել սահմանված հատկացումների հաշվին ֆինանսավորող ծախսատեսակները ըստ բյուջետային ծախսերի.

01.1.1

4111 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճար - 6890,0 հազ. դրամ
4131 Սոցիալական ապահովության վճարներ - 1375,0 հազ. դրամ
4261 Գրասենյակային նյութեր և հագուստ - 300,0 հազ. դրամ
ա) Պատճենահանման բնանկարների գումար - 100,0 հազ. դրամ
բ) Գրասենյակային ապրանքներ - 200,0 հազ. դրամ
4221 Ներքին գործուղումներ - 100,0 հազ. դրամ
4214 Կապի ծառայություններ - 100,0 հազ. դրամ
4212 Էներգետիկ ծառայություններ - 400,0 հազ. դրամ
4234 Տեղեկատվական ծառայություն - 100,0 հազ. դրամ
4252 Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում - 100,0 հազ. դրամ

4264 Տրանսպորտային նյութեր - 500,0 հազ. դրամ

01.6.1

4239 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ - 300,0 հազ. դրամ
4819 Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին - 400,0 հազ. դրամ

05.1.1

4111 Աշխատողների աշխատավարձ - 633,0 հազ. դրամ
4131 Սոցիալական ապահովության վճար - 147,0 հազ. դրամ
4213 Կոմունալ ծառայություններ - 100,0 հազ. դրամ

10.7.1

4729 Այլ նպաստներ բյուջեից - 1500,0 հազ. դրամ

ա) կարիքավոր ընտանիքի օգնություններ - 500,0 հազ. դրամ
բ) պատերազմի վետերանների օգնություն - 500,0 հազ. դրամ
գ) Տոնակատարությունների համար - 500,0 հազ. դրամ

4726 հուղարկավորության նպաստ բյուջեից - 500,0 հազ. դրամ

06.4.1

4212 Էներգետիկ ծառայություններ - 300,0 հազ. դրամ

08.1.1

4819 Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին - 500,0 հազ. դրամ

01.3.3

4819 նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին - 600,0 հազ. դրամ

09.4.1

4729 Այլ նպաստ բյուջեից - 848,8 հազ. դրամ

11.1.2

4891 Պահուստային միջոցներ - 3890,0 հազ. դրամ

5. Հաստատել համայնքի 2012թ-ի ֆոնդային բյուջեն եկամուտի գծով - 18690,0 հազ. դրամ

Որը առաջացել է՝

ա) Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ, որն ուղղվում է ծախսերի ծածկմանը - 15000,0 հազ. դրամ
բ) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից կատարվող հատկացումներ - 3690,0 հազ. դրամ

6. Հաստատել համայնքի 2012թ-ի ֆոնդային բյուջեի ծախսերը - 18690,0 հազ. դրամ

01.1.1

5122 Վարչական սարքավորումներ - 690,0 հազ. դրամ

06.4.1

5112 Շենքերի և շինությունների ձեռք բերում - 15000,0 հազ. դրամ
5113 Շենք և շինությունների կապիտալ վերանորոգում - 1000,0 հազ. դրամ

01.6.1

5133 զիողեզա քարտեզագրում - 2000,0 հազ. դրամ

7. Հաստատել, որ սույն որոշման անբաժանելի մասն են կազմում համայնքի 2012թ-ի բյուջեի նախագծով նախատեսված եկամուտների

և ծախսերի հիմնավորումները, հաշվարկները, այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունները:

Ավագանի՝ կողմ Գ. Ադամյան

կողմ Ա. Վարդանյան

կողմ Ա. Դալլաքյան

կողմ Գ. Զանազյան

կողմ Ս. Պետրոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԴԱԼԼԱՔՅԱՆ